Եւ զբազում չարչարել մինչև ոչ գտին զամենեսեան՝ հոռոմ և թուրք ընկերք որք զմիմեանս ցուցին։

Գչի ԺԱ Նոյեմբեր օլօֆէն էլ և արարին մուհտի[1]) զՄունգարիգատէ և ի տեղի նորա ղալխէսքէր՝ զՂատրին ծեր։ Եւ այգուցն (12 Նոյ.) մտանէր տօնանման ի ներքս, եւ ի գնալն ոչ ուրեք մարտեաւ եւ ոչ ընդ ումեք պատերազմեցաւ, այլ շրջագայեալ յանկլունս յանկլունս կղզեաց և գայր. և ի գալն մերձ ի փոքր կղզիսն ի մեծ հողմոցն կոտորէր Գ նաւ, և թուրքն գողացել էր ի Ֆռանկաց Բ նաւ, որ կանգնէին ի կըղզիս վասն պլտոյից։

Զոմն կալեալ՝ ի Թէրսխանէ անցուցին վասն գեղին մէստի, եւ զԲ հացածախ եւս վասն զաւլանլին ՃԻ առնելոյ։

[Ի] քաղաքս զով որ գտանէր եւ զղաւուխս եւ զմէստս կտրտէր եւ ի ցերեկ [կո]խեալ զմէյխանայս՝ գանէր յոյժ զՏաճիկս եւ սպան զքեաթիպ ոմն սպահոց, որ տւեալ կարդացեալ էր զղստ (?), ուստի և յոյժ անէծս ընկալեալ և ազգ նոցին նալէթ կարդացին նմա։ [Զ]այլ ոմն կին խոհեմ կալեալ և զաղախին եղեալ ի (պարապ) բեռնաբարձի և գանեալ ի վերայ նստ . . . եէնկիչէր աղասին կալեալ զոմն կին յղի աղախնօք և գանեալ, որք և կիսամեռ գնացեալ ի տուն մեռանին, և այրն մտեալ ի վէզիր և ի դատաւոր ոչինչ [չա]հեցաւ, այլ ՋՌ ըստակ տվին։ Եւ զմէյխանայս Եէնկի մահալէի եբեր՝ թէ չեն (բառ մը անընթեռնլի) վասն զի յոյժ ընդդիմացաւ նոցա աղան մինչև արիւն (տողը կըտրուած)։

1) զմուհտի.